

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« _____ » 2023թ.

N ____ -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով, 11-րդ հոդվածի 2-րդ մասով, 13-րդ և 14-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասով և 14-րդ հոդվածով, «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին, 10-րդ հոդվածի 2-րդ և 17-րդ հոդվածի 5-րդ մասերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Երևան համայնքում (այսուհետ՝ Երևան) տեղական վճարների 2024 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ.

1) սույն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի նկատմամբ ենթակա է կիրառման Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ Երևանի համար սահմանված 1-ից մինչև 12 տարածազնահատման գոտիականությունը, կիրառելով 1.9 բազային (առավելագույն) գործակիցը, ընդ որում՝ տարածազնահատման 2-րդ գոտուց սկսած՝ յուրաքանչյուր հաջորդ գոտու նկատմամբ կիրառվում է լրացուցիչ նվազեցնող՝ 0.15 գործակից.

2) տեղական վճար վճարողների գրանցամատյանները վարվում են էլեկտրոնային ձևով (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով), իսկ դրանց բացակայության դեպքում՝ փաստաթղթային.

3) Երևանի կողմից մատուցվող ծառայությունների համար տեղական վճարը գանձվում է ծառայության մատուցումից առաջ, ընդ որում՝ սույն որոշմամբ հաստատված հավելվածի 24-րդ և 25-րդ կետերում նշված ծառայությունների մատուցման դիմաց տեղական վճարը գանձվում է մինչև յուրաքանչյուր ամսվա 6-ը, բացառությամբ սույն որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ, 23-րդ և 29-րդ կետերում նշվածների, որոնց դեպքում տեղական վճարը գանձվում է ծառայությունը մատուցելուց հետո.

4) սույն որոշմամբ սահմանված հավելվածի 25-րդ կետում նշված ծառայությունների դիմաց վճարման ենթակա տեղական վճարի ամսական դրույքաչափը վճարվում է 2024 թվականի 10 ամսվա ընթացքում մատուցած

ծառայությունների դիմաց (2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի հուլիսի 1-ը և 2024 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ուսուցման համար)։

5) սույն որոշմամբ սահմանված ծառայությունների մատուցումը կարող է մերժվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դրանց տրամադրման համար նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու և (կամ) տեղական վճարի գումարը չվճարելու դեպքում։

6) ճարտարապետաշինարարական նախագծի համաձայնեցման վճարի վճարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետի ընթացքում՝ ամսական պարբերականությամբ՝ տեղական վճարի ընդհանուր գումարը համամասնորեն բաժանելով ըստ հաշվարկվող ամիսների։

3. Երևանի քաղաքապետին՝ ապահովել տեղական վճարների դրույքաչափերի, վճարման կարգի և ժամկետների, ամսվա ընթացքում տեղական վճարների յուրաքանչյուր տեսակի մասով փաստացի ստացված եկամուտների, ինչպես նաև Երևանի ավագանու սահմանած արտոնություններ ստացած անձանց և համապատասխան գումարների վերաբերյալ իրազեկումն Երևանի պաշտոնական համացանցային www.yerevan.am կայքում։

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԶՎՓԵՐԸ

1. Երևանի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝

1) մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 /հիսուն հազար/ դրամ.

2) 100-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ.

3) 500-ից մինչև 1500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 200000 /երկու հարյուր հազար/ դրամ.

4) 1500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 300000 /երեք հարյուր հազար/ դրամ:

2. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝

1) մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 /հիսուն հազար/ դրամ.

2) 100-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ.

3) 500-ից մինչև 1500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 200000 /երկու հարյուր հազար/ դրամ.

4) 1500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 300000 /երեք հարյուր հազար/ դրամ:

3. Սույն հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝

1) մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ.

2) 100-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 /հիսուն հազար/ դրամ.

3) 500-ից մինչև 1500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ.

4) 1500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

4. Երևանի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողամասի օտարման և օգտագործման իրավունքով (անհատույց օգտագործման (բացառությամբ Երևան քաղաքի ավագանու կողմից), վարձակալության կամ կառուցապատման) տրամադրելու, այլ անձի սեփականության իրավունքով պատկանող հողամասի սեփականության իրավունքից հրաժարվելու հիմքով Երևան համայնքին հանձնելու, ինչպես նաև շենք, շինությունների

օտարման (բացառությամբ սույն հավելվածի 7-րդ կետով սահմանված դեպքերի), անհատույց օգտագործման (բացառությամբ Երևան քաղաքի ավագանու կողմից) կամ վարձակալության իրավունքով տրամադրման դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝

1) մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անշարժ գույքի համար՝ 20000 /քսան հազար/ դրամ.

2) 500-ից մինչև 1500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անշարժ գույքի համար 50000 /հիսուն հազար/ դրամ.

3) 1500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անշարժ գույքի համար 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ:

5. Երևանի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող և օգտագործման տրամադրված անշարժ գույքի պայմանագրերի կետերի փոփոխման դեպքերում, մասնավորապես՝ պայմանագրի նախագծի մշակման համար, ինչպես նաև համաձայնագրերի կնքման դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝

1) մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անշարժ գույքի համար՝ 5000 /հինգ հազար/ դրամ.

2) 50-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անշարժ գույքի համար 10000 /տասը հազար/ դրամ.

3) 500-ից մինչև 1500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անշարժ գույքի համար 25000 /քսանհինգ հազար/ դրամ.

4) 1500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անշարժ գույքի համար 50000 /հիսուն հազար/ դրամ:

6. Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի փոխանակության դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման, մասնավորապես՝ փոխանակության պայմանագրի նախագծի մշակման համար՝ համայնքից ստացվող հողամասի անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի 5 տոկոսի չափով:

7. Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող բնակելի նշանակության անշարժ գույքի նվիրատվության (բացառությամբ Երևան քաղաքի ավագանու կողմից) դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման, մասնավորապես՝ պայմանագրի նախագծի մշակման համար՝ որպես նվիրատվություն ստացվող անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի հիման վրա հաշվարկված տվյալ տարվա անշարժ գույքի հարկի եռապատիկի չափով:

8. Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ հողամասի անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի (գյուղատնտեսական նշանակության հողամասերի դեպքում՝ փոփոխումից հետո առաջացող արժեքի) 5 տոկոսի չափով, իսկ միայն գործառնական նշանակության փոփոխության դեպքերում՝ 3 տոկոսի չափով:

9. Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների գործառական նշանակության փոփոխության դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ մինչև փոփոխումը եղած գործառական նշանակությանը համապատասխան ընթացիկ տարվա անշարժ գույքի հարկի հնգապատիկի չափով, իսկ շինությունների ընդհանուր մակերեսի մինչև 50 %-ի գործառական նշանակության փոփոխության դեպքերում՝ մինչև փոփոխումը եղած գործառական նշանակությանը համապատասխան անշարժ գույքի

հարկի հնգապատիկի չափով՝ փոփոխվող շինության անշարժ գույքի հարկից՝ համամասնական կարգով:

10. Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի սահմանների ճշտման և (կամ) հողհատկացման հիմքերի վերականգնման դեպքերում (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ հողամասի անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի 2 տոկոսի չափով:

11. 301-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու վճար՝

1) հասարակական և արտադրական նպատակային նշանակության շենքերի և շինությունների համար՝ 5000000 /հինգ միլիոն/ դրամ.

2) բնակելի նպատակային նշանակության շենքերի և շինությունների համար՝ 1000000 /մեկ միլիոն/ դրամ:

11.1. Նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու վճար՝ 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 4000000 /չորս միլիոն/ դրամի և 3001 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար 4000000 /չորս միլիոն/ դրամի հանրագումարի ու սույն հավելվածի 13-րդ կետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը:

12. Նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) փոփոխություն կատարելու (շենքի կամ շինության ծավալների ավելացում նախատեսող նոր նախագծման թույլտվություն կազմելու) վճար՝ 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1000000 /մեկ միլիոն/ դրամի և 3001 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար 1000000 /մեկ միլիոն/ դրամի հանրագումարի ու սույն հավելվածի 13-րդ կետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը:

13. Սույն հավելվածի 11.1-րդ և 12-րդ կետերի համաձայն՝ նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանքի) և դրա փոփոխության (շենքի կամ շինության ծավալների ավելացում նախատեսող նոր նախագծման թույլտվություն կազմելու) համար տեղական վճարի դրույքաչափի հաշվարկման նպատակով հիմք են ընդունվում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականությանը համապատասխանող հետևյալ գործակիցները.

Գոտի	Գոտիականության գործակից
1-3	4.0
4-7	3.0
8-12	1.0

14. Բնակելի նպատակային նշանակության շենքերի և շինությունների ճարտարապետաշինարարական նախագծի համաձայնեցման (հաստատման) վճար՝ 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների (բացառությամբ ավտոկայանատեղիների) համար՝ 7000000 /յոթ միլիոն/ դրամի և 3000

քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի (բացառությամբ ավտոկայանատեղիների) համար 7000000 /յոթ միլիոն/ դրամի հանրագումարի և սույն հավելվածի 16-րդ կետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը.

15. 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող բնակելի նպատակային նշանակության շենքերի և շինությունների ճարտարապետաշինարարական նախագծի վերահամաձայնեցման (փոփոխման) վճար՝ շենքի կամ շինության փոփոխվող ծավալների 100 քառակուսի մետրից ավել յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի (բացառությամբ ավտոկայանատեղիների) համար 7000000 /յոթ միլիոն/ դրամի հանրագումարի և սույն հավելվածի 16-րդ կետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը.

16. Սույն հավելվածի 14-րդ և 15-րդ կետերի համաձայն՝ շենքերի և շինությունների ճարտարապետաշինարարական նախագծի համաձայնեցման (հաստատման) և վերահամաձայնեցման (փոփոխման) համար տեղական վճարի դրույքաչափի հաշվարկման նպատակով հիմք են ընդունվում Կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականությանը համապատասխանող հետևյալ գործակիցները.

Գոտի	Գոտիականության գործակից
1-4	5.0
5-8	4.0
9-12	3.0

17. Ինժեներական ենթակառուցվածքների (վերգետնյա և(կամ) ստորգետնյա) ստեղծման (մոնտաժման, վերանորոգման, վերականգնման և այլն) նպատակով շինարարության թույլտվության վճար՝ յուրաքանչյուր մեկ գծամետրի համար՝ 10000 /տասը հազար/ դրամ:

18. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով հիմնադրույթային փաստաթղթի նախագծի կամ նախատեսվող գործունեության, դրանց ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացների վերաբերյալ հանրային լուսմների կազմակերպման վճար՝ 500000 /հինգ հարյուր հազար/ դրամ:

19. Երևանի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ յուրաքանչյուր մասնակցի համար՝ 10000 /տասը հազար/ դրամ:

20. Երևանի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ յուրաքանչյուր մասնակցի համար՝ օրական 200 /երկու հարյուր/ դրամ:

21. Երևանի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար՝

1) բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար՝ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ 200 /երկու հարյուր/ դրամ.

2) ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

ա. առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 70 /յոթանասուն/ դրամ.

բ. հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 30 /երեսուն/ դրամ.

գ. վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 18 /տասնութ/ դրամ.

դ. գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 4 /չորս/ դրամ,

ե. զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 8 /ութ/ դրամ.

զ. արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 8 /ութ/ դրամ.

3) շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 70 /յոթանասուն/ դրամ.

4) ոչ բնակելի նպատակային նշանակության առնվազն 1000 քմ ընդհանուր մակերես գրադեցնող շենքերում և (կամ) շինություններում և շենքերից ու շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի վերաբերյալ սույն հավելվածի 21-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 /երեք հազար/ դրամ.

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10000 /տասը հազար/ դրամ.

22. Երևանի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը սահմանվում է՝ մեկ խորանարդ մետր աղբի համար 500 /հինգ հարյուր/ դրամ, մեկ տոննա աղբի համար՝ 1800 /մեկ հազար ութ հարյուր/ դրամ:

23. Երևանի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝

1) ամսական 25 /քսանհինգ/ դրամ՝ յուրաքանչյուր 1 քառակուսի մետր սեփականության իրավունքով պատկանող բնակելի տարածքի մակերեսի համար.

2) ամսական 50 /հիսուն/ դրամ՝ յուրաքանչյուր 1 քառակուսի մետր սեփականության իրավունքով պատկանող ոչ բնակելի տարածքի մակերեսի համար:

24. Երևանի ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ մեկ երեխայի հաշվարկով ամսական 30000 /երեսուն հազար/ դրամ:

25. Երևանի ենթակայության արտադարոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, կերպարվեստի և արվեստի դպրոցներ) ուսումնական պլանով նախատեսված ծառայությունից օգտվողների համար՝ մեկ երեխայի հաշվարկով.

1) խորացված մասնագիտական երգեցողության ուսուցում՝ ամսական 32500 /երեսուներկու հազար հինգ հարյուր/ դրամ.

2) գործիքային (դաշնամուր, լարային նվագարաններ, փողային և ազգային նվագարաններ, հարվածային գործիքներ) բաժիններում ուսուցում՝ ամսական 28300 /քսանութ հազար երեք հարյուր/ դրամ.

3) գործիքային (ակորդեոն, տավիղ, կիթառ) բաժիններում ուսուցում՝ ամսական 24300 /քսանչորս հազար երեք հարյուր/ դրամ.

4) գործիքային (դհոլ) բաժնում ուսուցում՝ ամսական 21800 /քսանմեկ հազար ութ հարյուր/ դրամ.

5) երգեցողության ուսուցում՝ ամսական 27200 /քսանյոթ հազար երկու հարյուր/ դրամ.

6) պարարվեստի ուսուցում՝ ամսական 21000 /քսանմեկ հազար/ դրամ.

7) կերպարվեստի ուսուցում՝ ամսական 13000 /տասներեք հազար/ դրամ.

8) թատերարվեստի ուսուցում՝ ամսական 12200 /տասներկու հազար երկու հարյուր/ դրամ.

9) սույն հավելվածի 25-րդ կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերում նշված ծառայություններից որևէ մեկով օգտվողների կողմից նույն ենթակետերում նշված մեկ այլ ծառայությունից օգտվելու համար տեղական վճարը սահմանվում է տվյալ ուսուցման համար սահմանված տեղական վճարի 50 %-ի չափով:

26. Երևանի ենթակայության թանգարանների մուտքի համար՝ 1 անձի համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ:

27. Երևանի Ազատության հրապարակում գտնվող ստորգետնյա ավտոկայանատեղիում ավտոտրանսպորտային միջոցն կայանելու համար՝

1) մինչև մեկ ժամ, ինչպես նաև մեկ ժամից ավելի կայանելու յուրաքանչյուր ժամի համար՝ 300 /երեք հարյուր/ դրամ.

2) ժամը 24:00-ից մինչև 09:00-ն կայանելու համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ՝ միանվագ վճարելու դեպքում.

3) 30-օրյա ժամանակահատվածում՝ ժամը 08:00-ից մինչև 20:00-ն կայանելու համար՝ 20000 /քսան հազար/ դրամ (աբոնեմենտ).

4) 30-օրյա ժամանակահատվածում՝ ժամը 19:00-ից մինչև 09:00-ն կայանելու համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ (աբոնեմենտ).

5) 30-օրյա ժամանակահատվածում՝ շուրջօրյա կայանելու համար՝ 25000 /քսան հինգ հազար/ դրամ (աբոնեմենտ):

28. Երևանի սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար՝

1) ծառայողական ավտոկայանատեղերում, ըստ յուրաքանչյուր կայանման տեղի՝

ա. մեկ ամսվա համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ.

բ. մեկ տարվա համար (մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ)՝ 300000 /երեք հարյուր հազար/ դրամ.

2) այլ վճարովի ավտոկայանատեղում մեկ ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը ավտոկայանատեղում ժամը 09:00-ից մինչև 22:00-ն կայանելու համար՝

ա. Երևան քաղաքի «Ա» գոտում (Երևան քաղաքի «Ա» գոտին ներառում է Երևան քաղաքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, Ագաթանգեղոս, Խանջյան, Ալեք Մանուկյան, Չարենց, Կորյուն, Աբովյանի պուրակ, Իսահակյան, Մոսկովյան, Սարյան և Լեոյի փողոցների շրջանակը՝ մասնավորապես Արամի, Ամիրյան, Բուզանդի, Գևորգ Քոչարի, Չաքյան, Զորյան, Թումանյան, Իտալիայի, Լեոյի, Կարեն Դեմիրճյան, Կողբացու, Հանրապետության, Մելիք Ադամյան, Միեր Մկրտչյան /Տիգրան Մեծի պողոտայից մինչև Խորենացու փողոց /Հանրապետության փողոցի մի հատվածը/, Պուշկին, Սարյան, Վազգեն Սարգսյան, Տպագրիչների, Իսահակյան, Մովսես Խորենացու /Մաշտոցի պողոտայից մինչև Ագաթանգեղոսի փողոց հատված/, Մոսկովյան, Նալբանդյան, Վարդանանց /Սախարովի հրապարակից մինչև Խանջյան փողոց/, Տերյան, Ալեք Մանուկյան, Աբովյան, Չարենցի, Կորյունի, Ագաթանգեղոսի, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, Բեյրութի, Խանջյան, Պարոնյան փողոցները, Բաղրամյան /Մաշտոցի պողոտայից մինչև Իսահակյան փողոց/, Մաշտոցի, Սայաթ Նովայի, Տիգրան Մեծի /Հանրապետության հրապարակից մինչև Ագաթանգեղոս փողոց հատված/ պողոտաները, Շահումյան և Սախարովի հրապարակները).

յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ 300 /երեք հարյուր/ դրամ, որի դեպքում փաստացի կայանման ժամանակի թույլտվությունը հաշվարկն իրականացվում է հետևյալ կերպ՝ ավտոկայանատեղում կայանելու պահից մինչև 15 թույլ վճար կարող է չվճարվել, իսկ 15 թույլից ավելի կայանելու համար մեկ ժամվա համար սահմանված վճարի դրույքաչափը պետք է վճարվի նախապես՝ կայանելու պահից 15 թույլի ընթացքում, ընդ որում՝ կայանումը 1 ժամից ավելի տևելու դեպքում յուրաքանչյուր հաջորդ մեկ ժամի համար վճարումը պետք է կատարվի մինչև նախորդ ժամի համար կատարված վճարման ժամանակահատվածի լրանալը,

յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ 2000 /երկու հազար/ դրամ,

մեկ շաբաթվա համար՝ 5000 /հինգ հազար/ դրամ,

մեկ ամսվա համար՝ 18000 /տասնութ հազար/ դրամ,

մեկ տարվա համար (մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ)՝ 160000 /մեկ հարյուր վաթսույն հազար/ դրամ.

բ. Երևան քաղաքի «Բ» գոտում («Ա» գոտուց դուրս գտնվող Երևան քաղաքի ավազանու 25 դեկտեմբերի 2012թ. թիվ 561-Ն որոշմամբ սահմանված համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման մյուս փողոցները, պողոտաները և հրապարակները)՝

յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ 200 /երկու հարյուր/ դրամ, որի դեպքում փաստացի կայանման ժամանակի թույլտվությունը հաշվարկն իրականացվում է հետևյալ կերպ՝ ավտոկայանատեղում կայանելու պահից մինչև 15 թույլ վճար կարող է չվճարվել, իսկ 15 թույլից ավելի կայանելու համար մեկ ժամվա համար սահմանված վճարի դրույքաչափը պետք է վճարվի նախապես՝ կայանելու պահից 15 թույլի ընթացքում, ընդ որում՝ կայանումը 1 ժամից ավելի տևելու դեպքում յուրաքանչյուր հաջորդ մեկ ժամի համար վճարումը պետք է կատարվի մինչև նախորդ ժամի համար կատարված վճարման ժամանակահատվածի լրանալը.

յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ 1000 /մեկ հազար/ դրամ.

մեկ շաբաթվա համար՝ 2000 /երկու հազար/ դրամ.

մեկ ամսվա համար՝ 4000 /չորս հազար/ դրամ.

մեկ տարվա համար (մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ)՝ 24000 /քսանչորս հազար/ դրամ:

Ընդ որում Երևան քաղաքի «Ա» գոտու ավտոկայանատեղում կայանելու համար համապատասխան ժամանակահատվածի վճարումը տարածվում է նաև Երևան քաղաքի «Բ» գոտու նկատմամբ:

29. Հատուկ տարածքում մեկ ավտոտրանսպորտային միջոցի կամ դրա կցորդի պահպանման համար տեղական վճարը գանձվում է.

յուրաքանչյուր մեկ ժամվա և մեկ օրվա համար՝ սույն հավելվածի 28-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությամբ մեկ ժամվա և մեկ օրվա համար սահմանված դրույքաչափերի եռապատիկը:

30. Երևանի Ազատության հրապարակում գտնվող ստորգետնյա ավտոկայանատեղիում էլեկտրական ավտոտրանսպորտային միջոցի համար մեկ լիցքավորման կայան տեղադրելու կամ շահագործելու համար տեղական վճարի դրույքաչափը մեկ տարվա համար (մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ) սահմանվում է 400000 /չորս հարյուր հազար/ դրամ.

31. Երևանի Ազատության հրապարակում գտնվող ստորգետնյա ավտոկայանատեղիում էլեկտրական ավտոտրանսպորտային միջոցն մեկ կիլովատ էներգիայի դիմաց լիցքավորելու համար տեղական վճարի դրույքաչափը սահմանվում է 120 /մեկ հարյուր քսան/ դրամ:

32. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար տեղական վճարը մեկ փաստաթղթի համար սահմանվում է՝ 1000 /մեկ հազար/ դրամ:

33. Երևանի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար՝

1) 4-ից 6 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու դեպքում՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ.

2) 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ:

34. Երևանի ենթակայության քաղաքացիական կացության ակտերի գրանցման սպասարկման կենտրոնի աշխատավայրից դուրս քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ կատարելու համար տեղական վճարը սահմանվում է 50000 /հիսուն հազար/ դրամ:

35. Երևանը սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափը սահմանվում է 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ:

36. Երևան քաղաքում քաղաքաշինական գործունեության և բարեկարգման նպատակով հատկացման /գլխավոր հատակագիծ/ մեկ հայտի տեղական վճարի դրույքաչափը սահմանվում է 49300 /քառասունինը հազար երեք հարյուր/ դրամ:

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի՝ տեղական վճարը տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների շրջանակներում համայնքի կամ համայնքի պատվերով մատուցած ծառայությունների համար համայնքի բյուջե վճարվող, օրենքի դրույթների հիման վրա ավագանու սահմանած պարտադիր գանձույթ է:

Նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված են տեղական վճարների տեսակները, որի հիման վրա սույն որոշման նախագծով ներկայացվում է Երևան քաղաքում սահմանել տեղական վճարների տեսակները և դրույթաչափերը:

Առաջարկվում է Երևանի սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար սահմանված վճարների դրույթաչափերը սահմանել ըստ գոտիների՝ կիրառելով 2023 թվականի համար սահմանված դրույթաչափերի նկատմամբ բարձրացված դրույթաչափեր, ինչը ուղղված է Երևանի կենտրոնի բեռնաթափմանը:

Միաժամանակ առաջարկվում է ավելացնել Երևանի ենթակայության երաժշտական, կերպարվեստի և արվեստի դպրոցների ծառայություններից օգտվողների համար սահմանված տեղական վճարների դրույթաչափերը՝ այն համապատասխանեցնելով ուսումնական պլանով հաստատված դասաժամերի ծավալների, ինչպես նաև դպրոցների բնականոն գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ այլ ծախսերի փաստացի ինքնարժեքի մոտարկված չափին:

Հաշվի առնելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ կետը՝ առաջարկվում է սահմանել տեղական վճարի նոր տեսակներ և դրանց դրույթաչափեր, այն է՝ ճարտարապետաշինարարական նախագծի համաձայնեցման (հաստատման) վճար, ճարտարապետաշինարարական նախագծի վերահամաձայնեցման (փոփոխման) վճար, ինժեներական ենթակառուցվածքների (վերգետնյա և(կամ) ստորգետնյա) ստեղծման (մոնտաժման, վերանորոգման, վերականգնման և այլն) նպատակով շինարարության թույլտվության վճար, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով հիմնադրույթային փաստաթղթի նախագծի կամ նախատեսվող գործունեության, դրանց ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացների վերաբերյալ հանրային լուսման կազմակերպման վճար, իսկ շենքերի և շինությունների համար նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու վճարի տեսակի մեջ կատարել փոփոխություններ՝ ավելացնելով 301-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական, բնակելի նպատակային նշանակության շենքերի և շինությունների

համար նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու վճար:

Հաշվի առնելով վերոգրյալը, Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Երևան համայնքում տեղական վճարների 2024 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« _____ » 2023թ.

N ____ -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածներին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Երևան համայնքում (այսուհետ՝ Երևան) տեղական տուրքերի 2024 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ.

1) տեղական տուրք վճարողների գրանցամատյանները վարվում են էլեկտրոնային ձևով (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով), իսկ դրանց բացակայության դեպքում՝ փաստաթղթային.

2) Երևանի կողմից մատուցվող ծառայությունների (թույլտվությունների տրամադրման) համար տեղական տուրքը գանձվում է նախքան սույն որոշմամբ սահմանված գործողությունների կատարումը (վավերացումը) և (կամ) թույլտվությունների տրամադրումը կամ համայնքային ծառայությունների մատուցումը.

3) սույն որոշմամբ սահմանված թույլտվությունների տրամադրումը կամ գործողությունների կատարումը կարող է մերժվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դրանց տրամադրման համար նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու և (կամ) տեղական տուրքի գումարը չվճարելու, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում.

3. Երևանի քաղաքապետին՝ ապահովել տեղական տուրքերի դրույքաչափերի, վճարման կարգի և ժամկետների, ամսվա ընթացքում տեղական տուրքերի յուրաքանչյուր տեսակի մասով փաստացի ստացված եկամուտների, ինչպես նաև Երևանի ավագանու սահմանած արտոնություններ ստացած անձանց և համապատասխան գումարների վերաբերյալ իրազեկումն Երևանի պաշտոնական համացանցային www.yerevan.am կայքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ Երևանի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է.

1) հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների համար՝ 105000 /մեկ հարյուր հինգ հազար/ դրամ և կառուցվող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տան կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 105000 /մեկ հարյուր հինգ հազար/ դրամ,

2) սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

ա. 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 210000 /երկու հարյուր տասը հազար/ դրամի և շենքի (շինության) կառուցվող վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

բ. 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 700000 /յոթ հարյուր հազար/ դրամի և շենքի (շինության) կառուցվող վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

գ. 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1400000 /մեկ միլիոն չորս հարյուր հազար/ դրամի և շենքի (շինության) կառուցվող վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

դ. 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ստորև ներկայացված գոտիականության համար սահմանված դրույքաչափի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար ստորև ներկայացված գոտիականության համար սահմանված դրույքաչափի հանրագումարի և սույն ենթակետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը.

Գոտի	Դրույքաչափ
1-2	7000000 դրամ
3-5	6000000 դրամ

6-8	5000000 դրամ
9	4000000 դրամ
10	3000000 դրամ
11-12	2000000 դրամ

Սույն կետի համաձայն՝ շենքերի և շինությունների շինարարության թույլտվության համար տեղական տուրքի դրույքաչափի հաշվարկման նպատակով հիմք են ընդունվում Կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականությանը համապատասխանող հետոյալ գործակիցները.

Գոտի	Գոտիականության գործակից
1-4	5.0
5-8	4.0
9-12	3.0

3) ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 35000 /երեսունհինգ հազար/ դրամի և սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցվող վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 70000 /յոթանասուն հազար/ դրամի և սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցվող վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը:

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ Երևանի վարչական տարածքում նոր շենքերի և շինությունների շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) Երևան քաղաքի վարչական սահմաններում կառուցվող՝ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար 210000 /երկու հարյուր տասը հազար/ դրամի և կառուցվող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տան կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

2) այլ շենքերի և շինությունների (այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների, ինչպես նաև Երևան քաղաքի վարչական սահմաններում կառուցվող՝ 300 քառակուսի մետրից ավել ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի տան) շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար՝

ա. 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների կամ 300-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող՝ անհատական բնակելի տների համար՝ 420000 /չորս հարյուր քսան հազար/ դրամի և շենքի կամ շինության (անհատական բնակելի տան) կառուցման վայրի գոտիականությանը

համապատասխանող՝ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

բ. 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների և անհատական բնակելի տների համար՝ 1400000 /մեկ միլիոն չորս հարյուր հազար/ դրամի և շենքի կամ շինության (անհատական բնակելի տան) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

գ. 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների և անհատական բնակելի տների համար՝ 2800000 /երկու միլիոն ութ հարյուր հազար/ դրամի և շենքի կամ շինության (անհատական բնակելի տան) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

դ. 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների և անհատական բնակելի տների համար՝ 14000000 /տասնչորս միլիոն/ դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար 14000000 /տասնչորս միլիոն/ դրամի հանրագումարի և սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ շենքի կամ շինության (անհատական բնակելի տան) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը.

3. Երևանի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ տեղական տուրքը սահմանվում է 21000 /քսանմեկ հազար/ դրամ:

4. Երևանի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, տեղական տուրքը սահմանվում է 35000 /երեսունհինգ հազար/ դրամ:

5. Երևանի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ տեղական տուրքը սահմանվում է 600000 /վեց հարյուր հազար/ դրամ:

6. Երևանի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ տեղական տուրքը սահմանվում է 600000 /վեց հարյուր հազար/ դրամ:

7. Երևանի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ տեղական տուրքը սահմանվում է 600000 /վեց հարյուր հազար/ դրամ:

8. Երևանի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտովազման կետերում, ավտոմեքենաների

տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար, տեղական տուրքը սահմանվում է 180000 /մեկ հարյուր ութսուն հազար/ դրամ:

9. Երևանի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առ ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար, տեղական տուրքը սահմանվում է 50000 /հիսուն հազար/ դրամ:

10. Երևանի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար ըստ գոտիավորման տեղական տուրքը սահմանվում է համաձայն **N 1 աղյուսակի:**

11. Երևանի վարչական տարածքում օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար ըստ գոտիավորման տեղական տուրքը սահմանվում է համաձայն **N2 աղյուսակի:**

12. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին Երևանի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար տեղական տուրքը սահմանվում է 500 /հինգ հարյուր/ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

13. Երևանի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է՝

- 1) առևտրի օբյեկտների համար՝ 250000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ,
- 2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 1000000 /մեկ միլիոն/ դրամ,
- 3) բաղնիքների (սաունաների) համար՝ 1500000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ,
- 4) խաղատների համար՝ 3000000 /երեք միլիոն/ դրամ,
- 5) շահումով խաղերի համար՝ 1500000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ,
- 6) վիճակախաղերի համար՝ 450000 /չորս հարյուր հիսուն հազար/ դրամ:

14. Երևանի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ գոտիավորման, սահմանվում է համաձայն **N 3 աղյուսակի:**

15. Երևանի վարչական տարածքում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար տեղական տուրքը՝ յուրաքանչյուր տնային կենդանի պահելու համար, սահմանվում է 5000 /հինգ հազար/ դրամ:

16. Երևանի ավագանու սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ Երևանի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում

տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը, ըստ գոտիավորման, սահմանվում է՝

1) ակոնոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 6000 /վեց հազար/ դրամ,

2) թունդ ակոնոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 10500 /տասը հազար հինգ հարյուր/ դրամ,

3) այլ արտաքին գովազդի համար՝ 4500 /չորս հազար հինգ հարյուր/ դրամ,

4) սոցիալական գովազդի համար՝ 0 /զրո/ դրամ,

5) դատարկ գովազդային վահանակների համար՝ Երևանի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ սահմանված տուրքի 25 %-ի չափով.

6) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ Երևանի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով:

17. Երևանի կամ վարչական շրջանների խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է 300000 /երեք հարյուր հազար/ դրամ:

18. Երևանի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար տեղական տուրքը սահմանվում է 10000 /տասը հազար/ դրամ:

19. Երևանի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար, տեղական տուրքը սահմանվում է 1500000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ:

20. Երևանի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար, տեղական տուրքը սահմանվում է՝

1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7500000 /յոթ միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ.

2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 15000000 /տասնհինգ միլիոն/ դրամ.

3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 21000000 /քսանմեկ միլիոն/ դրամ.

4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 30000000 /երեսուն միլիոն/ դրամ:

21. Երևանի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է 300000 /երեք հարյուր հազար/ դրամ:

22. Երևանի վարչական տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է.

1) «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների (բացառությամբ հետտապարային

ակումբների) համար՝ օրացուցային տարվա համար՝ 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ,

2) հետապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ 1500000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ:

23. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին Երևանի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված՝ շրջիկ առևտրի կետի միջոցով վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման թույլտվության համար՝ յուրաքանչյուր ամսվա համար տեղական տուրքը սահմանվում է 50000 /հիսուն հազար/ դրամ:

24. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին Երևանի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված՝ շրջածախ առևտրի իրականացման թույլտվության համար՝ մեկ անձի համար՝ օրական 500 /հինգ հարյուր/ դրամ:

25. Երևանի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) սեզոնին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար տեղական տուրքը՝ մեկ քառակուսի մետրի համար, սահմանվում է 30000 /երեսուն հազար/ դրամ:

26. Երևանի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոնին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար տեղական տուրքը՝ մեկ քառակուսի մետրի համար, սահմանվում է 30000 /երեսուն հազար/ դրամ:

Աղյուսակ N1

Երևանի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության դրույքաչափեր

1. Երևանի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը սահմանվում է.

գոտի	մինչև 26 քմ.	26-ից մինչև 50 քմ.	50-ից մինչև 100 քմ.	100-ից մինչև 200 քմ.	200-ից մինչև 500 քմ.	500 և ավելի քմ.
1-ին	17,500	22,750	35,000	43,750	78,750	175,000
1-ին բակային	14,000	18,200	28,000	35,000	63,000	140,000
2-րդ	10,500	13,650	21,000	26,250	47,250	105,000
2-րդ բակային	8,225	10,692	16,450	20,562	37,012	82,250
3-րդ	6,825	8,872	13,650	17,062	30,712	68,250
4-րդ	4,200	5,460	8,400	10,500	18,900	42,000

2. Սույն հավելվածի իմաստով գոտիները ներառում են հետևյալ փողոցները և տարածքները.

1-ին գոտի

վարչական շրջան	փողոցի և տարածքի անվանում
Կենտրոն	Աբովյան փողոց
Կենտրոն	Ազաթանգեղոսի փողոց
Կենտրոն	Ալեք Մանուկյան փողոց
Կենտրոն	Ամիրյան փողոց

Կենտրոն	Արգիշտի փողոց
Կենտրոն	Բայրոնի փողոց
Կենտրոն	Բուզանդի փողոց
Կենտրոն	Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոց
Կենտրոն	Եզնիկ Կողբացու փողոց
Կենտրոն	Երվանդ Քոչարի փողոց
Կենտրոն	Զաքյան փողոց
Կենտրոն	Թումանյան փողոց
Կենտրոն	Թամանյան փողոց
Կենտրոն	Իսահակյան փողոց
Կենտրոն	Իտալիայի փողոց
Կենտրոն	Լեոյի փողոց
Կենտրոն	Խանջյան փողոց
Կենտրոն	Խորենացի փողոց (Սարյան փողոցից մինչև Նար-Դոս փողոց)
Կենտրոն	Կորյունի փողոց
Կենտրոն	Հանրապետության փողոց
Կենտրոն	Հերացու փողոց
Կենտրոն	Հին Երևանցու փողոց
Կենտրոն	Հյուսիսային պողոտա
Կենտրոն	Մարկ Գրիգորյան փողոց
Կենտրոն	Սարյան փողոց
Կենտրոն	Մաշտոցի պողոտա
Կենտրոն	Մարշալ Բաղրամյան պողոտա
Կենտրոն	Մոսկովյան փողոց
Կենտրոն	Նալբանդյան փողոց
Կենտրոն	Նար-Դոսի փողոց
Կենտրոն	Չարենցի փողոց
Կենտրոն	Պարոնյան փողոց
Կենտրոն	Պուշկինի փողոց
Կենտրոն	Սայաթ-Նովայի պողոտա
Կենտրոն	Վազգեն Սարգսյան փողոց
Կենտրոն	Վարդանանց փողոց
Կենտրոն	Տերյան փողոց
Կենտրոն	Տիգրան Մեծի պողոտա (Հանր. հրապարակից մինչև Նար-Դոս փողոց)
Կենտրոն	Տպագրիչների փողոց
Կենտրոն	Արամի փողոց
Կենտրոն	Բեյրութի փողոց
Կենտրոն	Դեղատան փողոց
Կենտրոն	Զորյան փողոց
Կենտրոն	Իսրայելյան փողոց
Կենտրոն	Զորափի փողոց
Կենտրոն	Մելիք-Աղամյան փողոց
Կենտրոն	Շարիմանյան փողոց
Կենտրոն	Ֆիրդուսու փողոց
Կենտրոն	Ավագ Պետրոսյան փողոց
Կենտրոն	Գրիգոր Քոչարի փողոց
Կենտրոն	Մհեր Մկրտչյան փողոց
Կենտրոն	Սպենդիարյան փողոց
Կենտրոն	Քաջազնունու փողոց
Կենտրոն	Մյասնիկյան պողոտա

Կենտրոն	Արշակունյաց պողոտա
Կենտրոն	Անտոն Քոչինյան փողոց
Կենտրոն	Ղազար Փարպեցու փողոց
Կենտրոն	Պոռոշյան փողոց
Կենտրոն	Անտառային փողոց
Կենտրոն	Օղակաձև զբոսայգի
Կենտրոն	Զարուբյան փողոց
Կենտրոն	Սարմենի փողոց
Կենտրոն	Աղայան փողոց
Կենտրոն	Մակար Եկմայան փողոց
Կենտրոն	Ծիծեռնակաբերդի խճուղի
Արաբկիր	Մարշալ Բաղրամյան պողոտա
Արաբկիր	Կոմիտասի պողոտա
Արաբկիր	Բարեկամության հրապարակ
Արաբկիր	Պոռոշյան փողոց
Նոր Նորք	Գայի պողոտա
Նոր Նորք	Մյասնիկյան պողոտա
Շենգավիթ	Ծովակալ Իսակովի պողոտա
Մալաթիա-Սեբաստիա	«Զվարթնոց» օդանավակայան
-	Հրազդանի կիրճ. (ամբողջ երկայնքով մինչև Երևանյան լիճ)

2-րդ գոտի

վարչական շրջան	փողոցի և տարածքի անվանում
Աջափնյակ	Աշտարակի խճուղի
Աջափնյակ	Բաշինջաղյան փողոց
Աջափնյակ	Գրիգոր Հասրաթյան փողոց
Աջափնյակ	Լենինգրադյան փողոց
Աջափնյակ	Հալաբյան փողոց
Աջափնյակ	Մազմանյան փողոց
Աջափնյակ	Մարգարյան փողոց
Աջափնյակ	Շինարարների փողոց
Աջափնյակ	Շիրազի փողոց
Աջափնյակ	Զանիբեկյան փողոց
Աջափնյակ	Սեբաստիայի փողոց
Աջափնյակ	Բեկնազարյան փողոց
Աջափնյակ	Մետաքսյա Սիմոնյանի փողոց
Աջափնյակ	Վարդուհի Վարդերեսյանի փողոց
Աջափնյակ	Եգիպտոսի հրապարակ
Ավան	Աճառյան փողոց
Ավան	Մյասնիկյան պողոտա
Ավան	Մարշալ Բաբաջանյան փողոց
Ավան	Մարշալ Խուդյակովի փողոց
Ավան	Ռուբինյանց փողոց
Ավան	Գայի պողոտա
Արաբկիր	Ազատության պողոտա
Արաբկիր	Նաիրի Զարյան փողոց
Արաբկիր	Վազգեն Առաջին Վեհափառի փողոց /Նախկին անվանում՝ Կասյան փողոց/
Արաբկիր	Կիկյան փողոց

Արաբկիր	Հակոբ Հակոբյան փողոց
Արաբկիր	Հրաչյա Քոչարի փողոց
Արաբկիր	Վահրամ Փափազյան
Արաբկիր	Վաղարշյան փողոց
Արաբկիր	Թբիլիսյան խճուղի
Արաբկիր	Բաբայան փողոց
Դավթաշեն	Անաստաս Միկոյան փողոց
Դավթաշեն	Սասնա Ծռեր փողոց
Դավթաշեն	Տիգրան Պետրոսյան փողոց
Դավթաշեն	Սամվել Գևորգյան փողոց
Դավթաշեն	Աշտարակի խճուղի
Դավթաշեն	Դավթաշեն 1-ին թաղամաս
Դավթաշեն	Դավթաշեն 2-րդ թաղամաս
Դավթաշեն	Դավթաշեն 3-րդ թաղամաս
Դավթաշեն	Դավթաշեն 4-րդ թաղամաս
Էրեբունի	Ազատամարտիկների պողոտա
Էրեբունի	Աթոյան փողոց
Էրեբունի	Այվազովսկու փողոց
Էրեբունի	Արցախի փողոց
Էրեբունի	Գաջեգործների փողոց
Էրեբունի	Դավիթ-Քելի փողոց
Էրեբունի	Էրեբունի փողոց
Էրեբունի	Խորենացու փողոց
Էրեբունի	Քրիստափորի փողոց
Էրեբունի	Մուրացանի փողոց
Էրեբունի	Ռոստոմյան փողոց
Էրեբունի	Տիգրան Մեծի պողոտա
Էրեբունի	Տիտոգրադյան փողոց
Էրեբունի	Խաղաղ Դոնի փողոց
Էրեբունի	Բելինսկու փողոց
Էրեբունի	Նուբարաշենի փողոց
Էրեբունի	Սասունցի Դավթի փողոց
Կենտրոն	Բոյունովի փողոց
Կենտրոն	Դերենիկ Դեմիրճյան փողոց
Կենտրոն	Ծովակալ Իսակովի պողոտա
Կենտրոն	Սարալանջի փողոց
Կենտրոն	Քրիստափորի փողոց
Կենտրոն	Խորենացու փողոց (Նար-Դոս փողոց դեպի Խորենացու 4-րդ նրբանցք)
Կենտրոն	Տիգրան Մեծի (Նար-Դոս փողոց դեպի Քրիստափորի փողոց)
Կենտրոն	Աթենքի փողոց
Կենտրոն	Լենինգրադյան փողոց
Կենտրոն	Անրի Վերնոյի փողոց
Կենտրոն	Ռաֆայել Լեմկինի փողոց
Կենտրոն	Սիլվա Կապուտիկյան փողոց
Կենտրոն	Հնդկաստանի փողոց
Կենտրոն	Սերգեյ Փարաջանովի փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Առնո Բաբաջանյան փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Անդրանիկի փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Լենինգրադյան փողոց

Մալաթիա-Սեբաստիա	Սեբաստիա փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Սվաճյան փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Տիչինայի փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Դեֆանս Հաուզինգ թաղամաս
Մալաթիա-Սեբաստիա	Րաֆֆու փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Իսակովի պողոտա
Մալաթիա-Սեբաստիա	Գուսան Շերամի փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Մալաթիայի փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Օհանովի փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Ծիծեռնակաբերդի խճուղի
Մալաթիա-Սեբաստիա	Մոնթե Մելքոնյան փողոց
Նոր Նորք	Թևոսյան փողոց
Նոր Նորք	Ալեքսանդր Միքայելյան փողոց
Նոր Նորք	Բագրևանդի փողոց
Նոր Նորք	Արտեմ Միկոյան փողոց
Նոր Նորք	Սամվել Սաֆարյան փողոց
Նոր Նորք	Դավիթ Բեկի փողոց
Նորք-Մարաշ	Արմենակ Արմենակյան փողոց
Նորք-Մարաշ	Դավիթ Բեկի փողոց
Նորք-Մարաշ	Հովսեփյան փողոց
Շենգավիթ	Արշակունյաց պողոտա
Շենգավիթ	Արտաշատի խճուղի
Շենգավիթ	Արտաշեսյան փողոց
Շենգավիթ	Բագրատունյաց փողոց
Շենգավիթ	Գարեգին Նժդեհի փողոց
